

Արձանագրություն №7/2014-2015

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. մայիսի 7-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեց):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

Շնորհավորանքներ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանի հորեյանական տարեդարձի առթիվ:

1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում և կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (զեկ. հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան):
2. ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի ամբիոն ստեղծելու հարցում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին (զեկ. դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ. Վ. Ղոչիկյան, դեղագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաղյան):
3. Գիտական զեկուցում. <<Հայոց քաղաքակրթային ինքնությունը պատմության հոլովույթում. Արտաշիսյան դարաշրջան>> (զեկ.՝ Համաշխ. պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյան):

4. Ընթացիկ հարցեր

1. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում չինարենի և չինական մշակույթի կենտրոն ստեղծելու առաջարկությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին:
2. Միքայել Մալխասյանի՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի լիազորությունները վայր դնելու և ՈՒԳԸ նոր նախագահ ընտրելու մասին:
3. Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ Վահագն Միքայելյանի <<Ալգորիթմական հանրահաշիվ>> ձեռնարկը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը հայտնեց, որ գիտական խորհրդի նիստը սկսվում է հաճելի միջոցառմամբ. մարտի 6-ին լրացել է իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Ղազինյանի ծննդյան 60-րդ տարեդարձը: Ռեկտոր Ա. Սիմոնյանն իր շնորհավորական խոսքում բարձր գնահատեց Գ. Ղազինյանի համալսարանական գործունեությունը ինչպես կրթության ու հետազոտության կազմակերպման բնագավառում, այնպես էլ Համալսարանի հանրային ներգրավման գործընթացներում: Ռեկտորը, ինչպես նաև շնորհավորական ելույթներով հանդես եկած գիտխորհրդի այլ անդամներ (պրոռեկտորներ Ա. Գրիգորյան, Գ. Գևորգյան, Ա. Մալխասյան, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյան և այլք) մատնանշեցին նաև Գ. Ղազինյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտական հանրություն և հասարակական ու պետական շրջանակներում նրա ունեցած հեղինակությունը: Առանձին անդրադարձ կատարվեց Գ. Ղազինյանի՝ որպես պարկեշտ մարդու և մտավորականի հատկանիշներին՝ սկզբունքայնությանը, երիտասարդների ճակատագրով մտահոգված լինելու և աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությանը, նրբանկատությանը և այլնին: Գիտական խորհուրդը ողջունեց Գ. Ղազինյանին՝ բարեմաղթելով երկար տարիների բեղուն ստեղծագործական աշխատանք:

1. **Լսեցին.** - ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում և կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյանը նշեց, որ ուսումնասիրելով վերջին տարիներին ծրագրի և դրա կազմակերպման որոշ կողմերի վերաբերյալ ծրագրի շահառուների արձագանքները, ինչպես նաև Համալսարանի կրթական գործի կազմակերպման պատասխանատուների նկատառումները՝ առաջարկվում է ծրագրում և կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

Հ/հ	Փաստաթղթի ենթակետը	Հինը	Նորը
Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (18.11.2010)			
		Ա. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1.	3.1.1.	անգլերենի իմացության տարբեր մակարդակների 3 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)	անգլերենի իմացության տարբեր մակարդակների 6 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)
2.	3.1.3.	<i>Մասնագիտական պատրաստության կրթամասի</i> առավելագույն բեռնվա-ծությունը 6 կրեդիտ է... Կրթամասը ներառում է 3 մոդուլ...	<i>Մասնագիտական պատրաստության կրթամասի</i> առավելագույն բեռնվա-ծությունը 10 կրեդիտ է... Կրթամասը ներառում է 5 մոդուլ...
3.	3.1.5.	ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի	ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման,

		որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել	վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները (նաև հեռավար ուսուցմամբ) կարող են ճանաչվել
4.	3.2.1.	Հրատարակումներ են գիտական հոդվածը, ուսումնամեթոդական աշխատանքը, ուսումնական ձեռնարկը, դասագիրքը և մենագրությունը:	Հրատարակումներ են գիտական հոդվածը, ուսումնամեթոդական աշխատանքը, ուսումնական ձեռնարկը, դասագիրքը և մենագրությունը (այդ թվում՝ էլեկտրոնային հրատարակմամբ):
5.	3.2.1.	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսում	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցուցակի պարբերական գիտական հրատարակություններում
6.	3.2.2.	Համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) զեկուցման համար դասախոսը ստանում է 1 կրեդիտ	Համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) զեկուցման համար (հրատարակվելու դեպքում) դասախոսը ստանում է 1 կրեդիտ
Հավելված			
7.	Անգլերեն և ակադեմիական միջավայրում	1 – 3-րդ մակարդակներ	1 - 6-րդ մակարդակներ
8.	Հրատարակումներ	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսներում	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցուցակի պարբերական գիտական հրատարակություններում
Բ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ			
9.	3.2.1.1.		Հանրակրթական դպրոցի համար նախատեսված ուսումնական գրականությունից հաշվառվում է միայն դասագիրքը՝ 10 կրեդիտ:
10	3.2.1.2.		Վերահրատարակված աշխատանքը կրեդիտավորվում է վերամշակված և լրացված լինելու դեպքում, ծրագրի 5-ամյա ժամկետում՝ 1 անգամ:
11	3.2.1.3.		Դասախոսի մասնագիտության առանձնահատկություններից ելնելով՝ հաշվարկվում են նաև գրանցված գյուտերը, հեղինակած քարտեզները, հետազոտությունները և այլ աշխատանքներ:
Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ (07.07.2011)			
Ա. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ			
1.	4.7.	Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են	Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել սահմանված

		ներկայացրել սահմանված թվակազմով ունկնդիրներ (8-15 ըստ դասընթացների)	նվազագույն թվակազմով ունկնդիրներ (8-15 ըստ դասընթացների)
		Բ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ	
2.	2.3.1.2.		ԵՊՀ դասախոսներն անցնում են ԱՄՆ Բոստոնի համալսարանի կողմից կազմակերպվող «Անգլերենը ակադեմիական միջավայրում» միջազգային հավաստագրումը (iTEP, International - Test of English Proficiency)
3.	2.3.1.3.		Անգլերենի A1 և A2 մակարդակների համար ունկնդիրները հանձնում են ներհամալսարանական քննություն՝ վաստակելով առավելագույնը 3 կրեդիտ (և՛ A1, և՛ A2 ստացողները): B1 - C2 մակարդակների համար ունկնդիրները անցնում են միջազգային հավաստագրում:
4.	2.3.1.4.		Միջազգային հավաստագրում անցած և առնվազն B1 շեմը (անգլերենի մասնագետները՝ C2) հաղթահարած ունկնդիրը վաստակում է 6 կրեդիտ: ԵՊՀ-ն ունկնդրի համար (նույն մակարդակի դեպքում) վճարում է 1 անգամ: Պահանջվող շեմը չհաղթահարած ունկնդիրը քննությունը վերահանձնելու համար ինքն է վճարում սահմանված գումարը:
5.	4.9.2.1.		Անգլերենից միջազգային այլ քննություն հանձնած դասախոսները կրեդիտավորվում են ըստ անգլերենի միջազգային քննությունների համարժեքության աղյուսակի

Որոշեցին. –

1. <<Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը>> և <<Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ>> փաստաթղթերում կատարել վերոնշյալ փոփոխություններն ու լրացումները:
2. Հանձնարարել հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը՝ վերագնահատել դասախոսների կուտակած համապատասխան կրեդիտները՝ հաշվի առնելով ծրագրում և կանոնակարգում կատարված փոփոխություններն ու լրացումները:

2.Լսեցին. – ԵՊՀ ղեղավորության և քիմիայի ֆակուլտետում ղեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի ամբիոն ստեղծելու հարցում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին: Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի ղեկան Տ. Ղոչիկյանը և ղեղավորության ամբիոնի վարիչ Ա. Սաղյանը տեղեկացրեցին, որ այսօր

<<Դեղագիտություն>> մասնագիտությամբ բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա ուսուցման և <<Դեղագործական քիմիա>> մասնագիտությամբ հեռակա ուսուցման բակալավրիատի ուսումնական ծրագրերը չափից շատ հազեցված են, ինչի պատճառով համապատասխան ուսումնամեթոդական, գիտաուսումնական և վարչակազմակերպչական գործառույթների իրականացումը իրատեսական չէ մեկ ամբիոնի համար և անհրաժեշտություն է առաջացել դեղագիտության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության և դրա իրականացման մեջ ներառված պրոֆեսորադասախոսական անձնակազմի հենքի վրա ստեղծել երկու նոր մասնագիտական ամբիոններ՝ <<Դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի ամբիոն>> և <<Դեղերի որակի հսկման և սերտիֆիկացման ամբիոն>>: Առաջինի կազմավորումից հետո, որոշակի աշխատանքներ տանելու պարագայում, օրինաչափ կլինի նաև ստեղծել նշված երկրորդ ամբիոնը: Բանախոսներն առաջարկեցին միջնորդել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ <<Դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումն ստեղծելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ ԵՊՀ-ում դեղագիտության և դեղագործության զարգացման գործում կարևորվում է Բելգորոդի համալսարանի հետ իրականացվող համագործակցությունը: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը դրական արձագանքեց էկոնոմիկայի՝ նշված ոլորտում ներդրվելու հարցին:

Որոշեցին. - Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում ստեղծելու <<Դեղերի տեխնոլոգիայի և էկոնոմիկայի ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումը:

3.Լսեցին. - Գիտական զեկուցում. <<Հայոց քաղաքակրթային ինքնությունը պատմության հոլովույթում. Արտաշիսյան դարաշրջան>>: Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ Ա. Ա. Ստեփանյանն իր գիտական զեկուցման մեջ անդրադարձ կատարեց հին ժամանակաշրջանում Հայաստանն իբրև քաղաքակրթական համակարգ հանդիսանալու վերաբերյալ թեզին, որի շրջանակներում առաջ քաշեց մի շարք ենթաթեզեր: Դրանցից մեկը վերաբերում էր էլիտա ունենալուն և վերնից ներքև սոցիալական կացութաձև սահմանելու փաստարկին. ընդ որում, ըստ Ստեփանյանի, էլիտայի և ժողովրդի հարաբերություններում մեծ է եղել բյուրոկրատական համակարգի դերը: Բանախոսը նշեց, որ հելլենիստական սոցիալական կացութաձևի գրեթե բոլոր տարրերը ներառված էին հայկական իրականության մեջ. այդ տարրերից մեկն աշխարհաժողովների անցկացումն էր: Ա. Ստեփանյանն անդրադարձ կատարեց նաև Արտաշիսյան դարաշրջանի նշանավոր արքաների ներդրած կառավարման համակարգերին:

Ընթացիկ հարցեր

4.1 Լսեցին. - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում չինարենի և չինական մշակույթի կենտրոն ստեղծելու առաջարկությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Հ. Պետրոսյանը նշեց նման կենտրոն ունենալու կարևորությունը՝ Չինաստանի՝

քաղաքականապես ու տնտեսապես միջազգային հզոր դերակատար դառնալու ներկա իրողության մեջ այդ երկիրն ու նրա քաղաքականությունը ավելի լավ ուսումնասիրելու տեսանկյունից: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ կենտրոնի գույքը տրամադրում է չինական կողմը:

Որոշեցին. - Միջնորդել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում չինարենի և չինական մշակույթի կենտրոն ստեղծելու առաջարկությամբ:

4.2 Լսեցին. - Միքայել Մալխասյանի՝ ԵՊՀ ՌԻԳԸ նախագահի լիազորությունները վայր դնելու և ՌԻԳԸ նոր նախագահ ընտրելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը հայտնեց, որ ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետի ավարտի մոտենալու, ինչպես և ատենախոսությունն առավել պատշաճ նախապատրաստելու հետ կապված ՌԻԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը ցանկանում է դադարեցնել իր լիազորությունները: Ա. Միմոնյանը բարձր գնահատեց Միքայել Մալխասյանի գործունեությունը ԵՊՀ ՌԻԳԸ նախագահի պաշտոնում՝ վկայակոչելով անցակցված միջոցառումների քանակն ու որակը, ուսանողական գիտական աշխատանքների հրատարակումների աճը և այլ ցուցանիշներ: Ա. Միմոնյանը նշեց, որ ՌԻԳԸ նոր նախագահ ՌԻԳԸ-ի կողմից առաջադրվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետի <<Տարածաշրջանային քաղաքականություն>> մագիստրոսական ծրագրի երկրորդ տարվա մագիստրանտ Մհեր Կարենի Հակոբյանը: Ա. Միմոնյանը համառոտ տեղեկություններ հաղորդեց Մ. Հակոբյանի գիտական ու ուսումնական գործունեության մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը, որպես ՌԻԳԸ նախագահի թեկնածուին դասավանդած դասախոս, նշեց նրա հետազոտական հմտությունների, կազմակերպչական ունակությունների և մարդկային հատկանիշների մասին:

Որոշեցին. - Ռեկտոր Ա. Միմոնյանը դիմեց գիտխորհրդի անդամներին՝ թեկնածության այլ առաջարկների հարցով: Առաջարկներ չհնչեցին: Բաց քվեարկության արդյունքում ԵՊՀ գիտական խորհուրդը Մհեր Կարենի Հակոբյանին միաձայն ընտրեց ԵՊՀ ՌԻԳԸ նախագահի պաշտոնում:

4.3. Լսեցին. - Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ Վահագն Միքայելյանի <<Ալգորիթմական հանրահաշիվ>> ձեռնարկը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ա. Միմոնյանը ներկայացրեց ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի գիտխորհրդի միջնորդությունը և առաջարկեց դրական լուծում տալ:

Որոշեցին. - Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ հավանություն տվեց ԻԿՄ ֆակուլտետի գիտխորհրդի միջնորդությանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

12.05.2015թ.